Հարգարժան գործընկերներ, հյուրեր, տիկնայք և պարոնայք

Ուրախ եմ ողջունելու «Առողջապահության ֆրանսիական օրեր Հայաստանում» խորագրով համաժողովի մասնակիցներին: Միաժամանակ ուզում եմ բարի գալուստ մաղթել ֆրանսիացի մեր գործընկերներին:

Ֆրանսիան եղել և մնում է հայ ժողովրդի անկեղծ բարեկամը: Մեր երկու ժողովրդի երկարամյա բարեկամության և միջպետական ամուր կապերի վրա հիմնված համագործակցությունն իր արտահայտությունն է գտել նաև առողջապահության ոլորտում: Դրա վառ վկայությունն է 1988 թվականի ավերիչ երկրաշարժից առ այսօր շարունակվող աջակցությունը Հայաստանի առողջապահական համակարգին:

Ես հպարտությամբ ուզում եմ փաստել, որ երեկվա մեր շատ բարերարների հետ այսօր մենք գործընկերային հարաբերություններ ենք կառուցում: Ուռուցքաբանության ոլորտում ճանաչում ունեցող Փարիզի Գյուստավ Ռուսսի ինստիտուտի հետ զարգացող համագործակցությունը դրա ապացույցն է: Հայաստանում նախկինում կրթական և բարեգործական ծրագրեր իրականացնող ինստիտուտի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Եվրոպայում քաղցկեղի դեմ պայքարի գործում առաջատար կենտրոնի բրենդը կներկայացվի Հայաստանում:

Ես վստահ եմ, որ Հայ-ֆրանսիական այս փոխգործակցության արդյունքում ուռուցքաբանության ծառայությունները մեր երկրում կդառնան շատ ավելի որակյալ և հասանելի:

Հարգելի բարեկամներ, ես հույս ունեմ, որ համատեղ այս միջոցառումը մասնակից ֆրանսիական Սանոֆի-Ավենտիս Գրուպի, Սերվիեի, Ռումեքսի, Ժերֆլորի և հայկական կազմակերպությունների

համար փոխշահավետ համագործակցության եզրեր գտնելու առիթ կհանդիսանա: Ուրախ եմ, որ այս համաժողովին նոր բիզնես հետաքրքրություններով է մասնակցում ֆրանսիական Սանոֆի-Ավենտիս Գրուպ ընկերությունը, ում հետ համագործակցության բավական արդյունավետ ճանապարհ ենք անցել ոչ միայն դեղերի, այլև հոգեկան հիվանդությունների դեմ պայքարի ոլորտներում:

Մենք բաց ենք և ակնկալում ենք, որ կկարողանանք համագործակցել ինչպես բրենդային ու ֆրանշիզային աջակցության, մասնագիտական ճյուղային կառավարման, ստանդարտ գործելակարգերի ներդրման, այնպես էլ՝ դեղերի և բժշկական պարագաների արտադրության ոլորտներում:

Բոլորիդ մաղթում եմ արդյունավետ աշխատանք, համագործակցության զարգացման իրական հնարավորություններ և լավ տրամադրություն:

Ֆրանսիացի մեր բարեկամներին ցանկանում եմ նաև երևանյան անմոռանալի օրեր: